


## ИСТОРИЯ

### Վազգեն Ա վեհափառի այցը Հռոմ

Պողոսյան Լիլիթ Ա.

ս. գ. թ., աստվածաբանության ֆակուլտետի կրոնագիտության ամբիոնի դոցենտ,  
Երևանի պետական համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0007-8061-7420>

[lilithpoghosyan@ysu.am](mailto:lilithpoghosyan@ysu.am)

ՀՏԳ՝ 27-72; EDN: HYVHFO

DOI: 10.58587/18292437-2025.1-58

**Հանգուցարաներ և բառակապակցություններ՝** Հռոմի պապ, կարդինալ Աղաջանյան, Էկումենիզմ, եկեղեցական հարաբերություններ, պատարագ, հայ համայնք, եկեղեցի, հոգևորական

#### Визит католикоса Вазгена I в Рим

Погосян Лилит А.

кандидат исторических наук, доцент кафедры религиоведения, факультет богословия,  
Ереванский государственный университет (Ереван, РА)

**Аннотация.** После длительного перерыва, во время правления Католикоса Всех Армян Вазгена I, между Первопрестольным Эчмиадзином и Ватиканом зародились и развивались новые связи и отношения. Визит Патриарха Вазгена I в Рим состоялся с 8 по 12 мая 1970 года. Важно отметить, что кардинал Агаджанян сопровождал Вазгена I во время всех важных встреч. Примечательно, что встреча кардинала Агаджаняна и Вазгена I можно назвать родственной. Взаимоотношения Апостольской и Римско-Католической Церквей в XX веке вышли на новый уровень. Это сотрудничество имело весьма важное и фундаментальное значение для того периода. Оно стало прочным фундаментом и основой для последующих событий и экуменических процессов.

**Ключевые слова и словосочетания:** Папа Римский, Кардинал Агаджанян, экуменизм, церковные отношения, литургия, армянская община, церковь, духовенство

#### His Holiness Vazgen I visit to Rome

Poghosyan Lilit A.

PhD, Associate Professor of the chair of Religious studies, Faculty of Theology,  
Yerevan State University (Yerevan, RA)

**Abstract:** After a long break, during the years of the enthronement of Catholicos of All Armenians Vazgen I, new relations began and developed between the Mother See of Holy Etchmiadzin and the Vatican. The visit of the Armenian Patriarch to Rome was a great event in the history of inter-church relations of that period. In 1970 on May 8-12 His Holiness Vazgen I visited Rome. It is important to note that during all important meetings, His Holiness Vazgen I was accompanied by Cardinal Aghajanyan. It is noteworthy that the meeting between Cardinal Aghajanyan and Vazgen I was very fraternal. The relations between the Armenian Apostolic and Roman Catholic Churches were brought to a new level in the 20th century. That cooperation had a rather important and fundamental impact on the period, becoming a solid foundation for subsequent events, developments and ecumenical processes.

**Keywords & phrases:** Pope, Cardinal Aghajanyan, ecumenism, church relations, liturgy, Armenian community, church, clergy

Երկար տարիների ընդմիջումից հետո Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի այրոնակալման տարիներին բարեկամական նոր կապեր և հարաբերություններ սկսվեցին և զարգացան Մայր Աթոռի և Վատիկանի միջև: Հայոց հայրապետի Հռոմ այցելությունը մեծ իրադարձություն էր այդ ժամանակահատվածի միջեկեղեցական հարաբերությունների պատմության մեջ:

Հայ առաքելական և կաթողիկե եկեղեցիների միջև վերահաստատված հարաբերությունները սկսվեցին հայ եկեղեցու կողմից ընդունված որոշումով՝ դիտորդական առաքելությամբ մասնակցել Վատիկանի Բ ժողովի աշխատանքներին 1963-1965 թթ.:

1963 թ. հուլիսի 16-ին, հայոց հայրապետը պաշտոնական հրավեր է ստանում Վատիկանից: Հրավերը Պողոս Չ պապի անունից կարդինալ Բեան հայ առաքելական եկեղեցու անունից երկու դիտորդ էր խնդրում ուղարկել Վատիկան՝ մասնակցելու այնտեղ հրավիրվելիք եկեղեցական երկրորդ ժողովին [1, էջ 18]:

Վեհափառի նախագահությամբ Գերագույն հոգևոր խորհուրդը 1963 թ. սեպտեմբերի 2-ի նիստում լիազորում է Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ Տ. Պարզև եպիսկոպոս Գևորգյանին և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Գրիգոր Բեքմեդյանին՝ ներկայացնելու հայ առաքելական

եկեղեցին Վատիկանի երկրորդ ժողովում՝ դիտորդի կարգավիճակով [1, էջ 18]:

Հետաքրքրական է, որ նման կերպով է արձագանքել վերսկսված հարաբերությունների վերաբերյալ նաև պապական Հռոմը: 1970 թ. մարտի 25-ին Վատիկանի ռադիոն պաշտոնապես հաղորդեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա Վեհափառի այցելությունը Պողոս Զ Պապին: Վատիկանի պաշտոնական հաղորդագրության մեջ ասվում էր, որ այդ այցելությունը արդյունք է համատեղ ջանքերի, հատկապես, երբ հայ առաքելական եկեղեցին դիտորդներ էր ուղարկել Վատիկանի Բ ժողովին: Նաև ավելացվում է այն տեղեկությունը, որ Վազգեն Ա-ն լինելու էր Պողոս Զ-ի անձնական հյուրը և իջևանելու էր Վատիկանում:

Սիքստինյան մատուռում երկուստեք հոգևորականների հանդիպման ժամանակ իր ելույթի խոսքում Պողոս Զ պապը նույնպես կարևորում է այդ հանգամանքը՝ նշելով. «Իմաստալից չէ՞ որ մենք նորէն հաստատեցինք մեր յարաբերությունները Վատիկանի Բ Տիեզերական ժողովի առթիւ- որմէ զօրեղ կերպով արտացոլաց վերանորոգումի ջանքը եւ որուն Չեր Սրբությունը ուզեց ներկայ լլլալ իր անձնական պատուիրակ դէտերու միջոցաւ: Ապա մենք ալ կարողացանք անձամբ այցելութիւն մը տալ Երուսաղէմի եւ Պոլսոյ Հայ Պատրիարքներուն, զորս ուրախ ենք այսօր եւս տեսնելու ձեր կողքին: Երկու անգամ ալ մեր պատուիրակությունները Էջմիածին գացին: Ուրիշ առիթով մըն ալ սիրայօժար ընդառաջ երթայով Չեր ազնիւ հրաւերին. Չեր մոտ եկաւ Իզնատիոս Պետրոս Պաթանեան կաթողիկոսը, ներկայացնելով այսպէս բովանդակ Հայ կաթողիկէ համայնքը» [2, էջ 28]:

Հայ առաքելական եկեղեցին նույնպես կարևորում է վերսկսված հարաբերություններում Հռոմի եկեղեցու ներկայացուցիչների այցելությունը Էջմիածին 1965 թ., ինչպես նաև 1969 թ. աշնանը՝ Հայոց Հայրապետի ծննդյան 60-ամյակի հանդիսություններին:

1970 թ. մայիսի 8-12-ին տեղի է ունենում Վազգեն Ա հայրապետի այցը Հռոմ:

1970 թ. մայիսի 8-ին Վազգեն Ա կաթողիկոսը դեռ Հռոմի օդանավակայանում հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ. «Եկեղեցական կեանքի իրավունքով, մեր դարը կրնայ կոչուի եւ սահմանուիլ որպէս ժամանակաշրջան մը համամիութենական հոգիին, զոր մենք կը նկատենք ճշմարտապէս համապատասխանող Քրիստոսի կամքին և Անոր առաքելակերտն հոգիին՝ որոնք, իրենց կեանքով եւ գործերով, մնացին անբաժան՝ նոյն Աւետարանով եւ նոյն առաքելությամբ: Թող Սուրբ Հոգին լլլայ առաջնորդը ամէնուս» [2, էջ 9]: Վազգեն Ա հայրապետին այս այցի ժամանակ ուղեկցում էին Երուսաղեմի հայոց պատրիարք Եղիշե արք. Տերտերյանը, Կ. Պոլսի հայոց

պատրիարք Ծնորիք արք. Գալստյանը, սր. Էջմիածնի լուսարարապետ Հայկազուն արք. Աբրահամյանը, Արևմտյան Եվրոպայի կաթողիկոսական պատվիրակ Սերովբե արք. Մանուկյանը, Լոնդոնի հայոց առաջնորդ Պսակ արք. Թումանյան, ԱՄՆ և Կանադայի առաջնորդ Թորգոմ արք. Մանուկյանը, Հարավային Ամերիկայի կաթողիկոսական պատվիրակ Բաբկեն արք. Ապատյանը, Իտալիայի առաջնորդ Զգոն եպս. Տեր-Հակոբյանը, Երուսաղեմի պատրիարքության դիվանապետ Շահե եպս. Աճեմյանը, Գեղարդավանքի վանահայր Հայր Նարեկ վրդ. Շաքարյանը և սր. Էջմիածնի արտասահմանյան հարաբերությունների պաշտոնավարության ընդհանուր քարտուղար Պարզև Շահբազյանը:

Նույն օրը Հռոմում պաշտոնական ճաշկերույթի ժամանակ վեհափառ հայրապետն իր խոսքում կարևորել է այն հանգամանքը, որ այդ այցով նոր էջ է բացվել երկու եկեղեցիների պատմության մեջ, ժամանակաշրջանի մարտահրավերների լուծման ճանապարհին: Եվ ավելացրել է, որ եկել էր ժամանակը բոլոր եկեղեցիների իրար մոտենալու և միասին աղոթելու համար. «Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին՝ որուն առաջին սպասաւորը լլլալու կոչուած ենք Մենք, իր ամբողջ նուիրապետութեամբ եւ հաւատացեալ ժողովուրդով ի Խորհրդային Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, երջանիկ է այսօր որ այստեղ կը գտնուի, նոր էջ մը բանալու իր պատմութեան մէջ, էջ մը՝ որուն վրայ պիտի կարողանանք արձանագրել բարի վկայություններ մեր քրիստոնէական սիրոյն եւ Չեր մեծ Եկեղեցիին հետ մեր գործակցութեան, արդի աշխարհը յուզող հարցերու լուծման ճանապարհին վրայ: Եկած է ժամանակը, որպէսզի բոլոր Եկեղեցիները մօտենան իրարու եւ միասին աղօթեն, միասին ներշնչուին, մէկը միւսով զօրանայ եւ միատեղ գործեն Աստուծոյ փառքին եւ մարդու փառքին համար» [2, էջ 10]:

Վազգեն Ա կաթողիկոսի և Հռոմի պապ Պողոս Զ-ի պատմական հանդիպումը տեղի է ունեցել մայիսի 9-ին Վատիկանում՝ «Չգեստավորումների դահլիճում», ապա միասին ուղղվել են դեպի Սիքստինյան մատուռ:

Սիքստինյան մատուռի խորանը զարդարող Սիբելանջելոյի «Վերջին Դատաստան» որմնանկարի առջև, ինչպես պատմում են ժամանակակիցները, մի հազվագյուտ տեսարան էր բացվել. խորանի աջ կողմում կանգնած է եղել Վազգեն Ա-ն, մյուս կողմում Պողոս Զ-ն: Աջ կողմում մոտ վեհափառին տեղավորվել էին հայ հոգևորականները, իսկ ձախ կողմում՝ Կաթողիկէ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները, որոնց թվում կարդինալ Աղաջանյանը և Իզնատիոս Պաթանյան պատրիարքը:

Եվ Վազգեն Ա վեհափառը և Պողոս Զ-ն Սիքստինյան մատուռում հանդես եկան ճառե-

րով: Այդ ճառերը ամբողջովին հրապարակված է: Սակայն բերենք այդ ճառերից համառոտ մեջբերումներ՝ պատկերացնելու համար հանդիպման հիմնական նպատակը:



Վազգեն Ա վեհափառը և Պողոս Չ Պապը Հռոմում 1970 թ. մայիս

Վազգեն Ա նախ ողջունել է Հռոմի քահանայապետին և բոլոր ներկաներին, ապա ավելացրել. «Ձեզի կու գանք, իղձերով ջերմագին, որ մեր օրերու աշխարհին մէջ, յաղթականօրէն նոր ճանապարհ բացուի Աւետարանի լոյսի ճառագայթումի, որուն ի խնդիր Ձերդ Սրբությունը կը տքնի այնքան առատաստեղ սիրով եւ այնքան իմաստուն վճռականութեամբ, շարունակելով երջանկահիշատակ Յովհաննէս Իգ Պապի լոյս տեսիլքով սկզբնատրուած գործը: Եւ գուցէ, չենք սխալիր, եթէ այդ գործի մէջ կարևորագոյնը նկատենք Եկեղեցիներու միություն կենսագործման եւ աշխարհի խաղաղութեան ամրապնդման հրամայականները: Հայաստանեայց եկեղեցին երջանիկ է մասնակցելու էկումենիկ շարժման եւ քոյր եկեղեցիներու հետ միատեղ յառաջ ընթանալու դէպի միություն Քրիստոսի սիրոյն մէջ, յենած իր ոգեկան բազմադարեան ժառանգութեան եւ իր Նուրապետական կազմակերպութեան վրայ:

...Հայ Եկեղեցին եւ հայ ժողովուրդը ողբերգական փորձառությունը ունին անցեալ պատերազմներուն, մանաւանդ համաշխարհային առաջին պատերազմին, երբ 1915-ին ամբողջ Արևմտահայաստանը բնաջինջ եղաւ, մօտ երկու միլիոն հայ քրիստոնեաներու նահատակութեամբ, որ հանդիսացաւ մեր դարու առաջին ցեղասպանությունը: Մենք միշտ պիտի աղօթենք, որ նման ողբերգություններ երբէք չպատահեն աշխարհի վրայ, որեւէ տեղ, որեւէ ժողովուրդի» [2, էջեր 26-27]:

Հռոմի պապ Պողոս Չ-ի ճառը հիմնականում արտահայտում էր պատրաստակամություն

հայ առաքելական եկեղեցու հետ հարաբերությունների լավացման և ընդհանրական քրիստոնեական մեկ նպատակի համար ծառայությունը. ««Ինչքան բարի է, ինչքան քաղցր եղբայրաբար միասին բնակիրը»:...Ինչպես յիշել այս առաւօտ այս պատմական հանդիպումի պահուն՝ մեր նախորդներուն, Սրբազան Քահանայապետներու յատուկ սերը ու գուրգուրանքը հայ ազգին հանդէպ եւ ի մասնաւորի այն գորովը, գոր հեղինակաւոր կերպով ցուցուց Բենեդիկտոս ԺԵ Պապը: Հանելի է մեզի յիշեցնել նաեւ այն ծրագիրը, գոր յղացած էր Գրիգոր ԺԳ-ի որ է ըսել Հռոմի մէջ հայկական Վարժարանի հիմնարկութիւնը, որ մեզի այնքան սիրելի է: Գիտէք նաեւ թէ մեզի յոյժ հանելի է ունենալ մեր անմիջական գործակիցներուն թուին մէջ, մեր պատուական եղբայրը, Գրիգոր-Պետրոս Աղաճանեան Կարդինալը, հայ՝ ազգաւ, որ կը նախագահէ Ս. Աթոռին կարեւորագոյն մէկ կազմակերպութեան, որ է ժողովուրդներու ատնտարանացման ժողովը: Չենք կրնար յիշել նմանապէս բոլոր Կայսրողիկէ Հայերը, որոնք ցրուած են աշխարհի ամէն կողմերը եւ անոնց տեսական հաւատարմութիւնը: ...Եթէ ժամանակներու աղէտները, մշակութային տարբերությունները, լեզուաբանական դժուարությունները թարգմանելու որոշ ուսումնասիրուած եւ հետզհետեւ յստակացուած բառերը ուրիշ լեզուներու, զմեզ առաջնորդեցին դէպի որոշ տարբերություններ մեր Հաւատքի հիմնական խորհուրդին արտայայտման մէջ, վերաբննելու ենք այս վարդապետական դժուարությունները, ճանաչելու համար այն ազդակները, որոնք զանոնք յառաջ բերին եւ յաղթահարելու համար զանոնք եղբայրաբար:... Բնաստալից չէ որ մենք նորէն հաստատեցինք մեր յարաբերությունները Վատիկանի Բ Տիեզերական ժողովի առթիւ- որմէ զօրեղ կերպով արտացոլաց վերանորոգումի ջանքը եւ որուն Ձեր Սրբությունը ուզեց ներկայ լոյս իր անձնական պատուիրակ դէտերու միջոցաւ: Այս մենք ալ կարողացանք անձամբ այցելություն մը տալ Երուսաղէմի եւ Պոլսոյ Հայ Պատրիարքներուն, գորս ուրախ ենք այսօր եւս տեսնելու ձեր կողքին: Երկու անգամ ալ մեր պատուիրակությունները Էջմիածին գացին: ... Բայց կը խորհինք է պատմութեան ընթացքին առաջին անգամն է որ Հռոմի Եպիսկոպոսը պատիւն եւ ուրախությունը ունի հիւրասիրելու իր տան մէջ Էջմիածնի Կայսրողիկոսը: Այսպիսի դէպք մը պէտք է որ հանդիսանայ նոր անկիւնադարձ մը համաձայնութեան եւ գործակցութեան իրարու եւ ամէնուն հետ, գոյացնելու համար ճշմարիտ եղբայրակցությունը սիրոյ մէջ: Այս վկայությունն է գոր Ս. Հոգին կը պահանջէ մեզմէ, այս է այն բաժինը, գոր մենք բերելու ենք խաղաղութեան հաստատման բոլոր մարտոց եւ ազգերու միջեւ:... Հայցենք միասին Աստուծմէ, որ մեր սրտերուն մէջ ամրապնդէ այն բաղձանքը եւ այն յոյսը, որ մեր մէջը սկսուած սքանչելի գործը ի կատար հասցնէ» [2, էջեր 27-28]:

Վազգեն Ա վեհափառը պաշտոնական հանդիպումներ ունեցավ տարբեր կարգի նախնիների, քարտուղարների, տարբեր կաթողիկե համալսարանների ղեկավարների և աստվածաբանների հետ: Կարևոր է արձանագրել, որ այդ հանդիպումներին նրան ողջ ընթացքում ընկերակցեց նաև կարդինալ Աղաջանյանը:

Սբ. Պետրոսի եկեղեցում կատարված պատարագից հետո վեհափառ հայրապետն իրեն ուղեկցող հոգևորականների և բազմաթիվ հյուրերի հետ հյուրընկալվեցին Հռոմի Լևոնյան վարժարանում: Բոլոր հյուրերին (106 հյուր) ողջունեց կարդինալ Աղաջանյանը: Կարդինալի խոսքն ուղղված Վազգեն Ա-ին ամբողջությամբ ներկայացնում է իր նվիրումն ու սերը հայ ժողովրդի նկատմամբ: Այդ խոսքերն որպես վկայություն նրա վերաբերմունքի առ հայության բերենք ստորև. «...Պատմական Վեհափառ Տէր, մեզի պատմական օրեր սպրեցուցիք. եւ մենք կը մտայնենք Ձեզի որ երկար տարիներ կարենաք հոռւել՝ ոչ միայն տիեզերատարած, ցիրուցան, ցրուած մեր Հայութիւնը, այլ մանաւանդ՝ ժողովուրդը մայր հայրենիքին, որ ծնունդ առած է քրիստոնէական հաւատքը, որ՝ հայ ազգը եղած է առաջին քրիստոնէայ ժողովուրդ, առաջինը՝ որպէս ազգ, որ ընդունած է Յիսուսի Քրիստոսի աւետարանը Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով: Հայ ժողովուրդը եղած է միշտ լուսատենչ լոյսը փնտռած է, ու գտած է զայն իսկապէս՝ Ս. Աւետարանի էջերուն եւ անոնց ապրումին մէջ, ոչ միայն խօսքով, ոչ միայն իրեն դարատր մշակոյթովը, այլ իրեն զաւակներուն արիւնովը ոչ միայն հեռաւոր դարերուն՝ նաեւ, կրնանք ըսել, մեր օրերուն: ...Տեղոյս լրագիրները ըսին թէ՛ հայութեան թիւը չորս միլիոնի կը հասնի. բայց այսօր, մեր մտերմական խօսակցութեան մէջ, ստուգեցինք թէ՛ ան հասած է հինգ միլիոնի. Աստուած դեռ աւելի բազմացնէ: Կը մտայնենք որ բոլորս կարենանք օրմը հաւաքուիլ ամփոփուիլ այդ մայրենի հողին վրայ, որ աւետարանական լոյսով լուսաւորուած է, եւ պիտի շարունակէ միշտ աւելի եւս լուսաւորել բովանդակ Հայ ազգը ու պատիւ բերել համայն քրիստոնէայ աշխարհին» [2, էջ 41]:

1970 թ. մայիսի 12-ին կարդինալ Աղաջանյանը Վազգեն Ա-ին հրաժեշտ տալիս նրան հանձնեց ոսկեծույլ մեծադիր մեդալ, իսկ վեհափառի ուղեկցող շքախմբի անդամներին՝ Վարդանանց մեդալներ: Վազգեն Ա-ն կարդինալին նվիրեց սբ. Էջմիածնի տաճարը պատկերող յուղաներկ գեղանկար:

Ինչպես հետագայում են հիշելու, անակնկալ կերպով Պողոս Չ պապը իր մի քանի ուղեկիցներով անձամբ գալիս է Վազգեն Ա-ի մոտ հրաժեշտ տալու: Հրաժեշտի խոսքերին հաջորդում է Հռոմի պապի կողմից Հայոց հայրապետին սբ. Բարդուղիմեոս առաքյալի մատուցած պարունակող մասնատուփի հանձնումը: Այդ անգին մատուցած տվչությունը Վազգեն Ա-ին նախապես

Հռոմի քահանայապետին հուշել էր նույնիսկ կարդինալ Աղաջանյանը: Այդ անակնկալ նվերը մեծ հուզում արթնացրեց վեհափառ հոր մոտ, մանավանդ որ Հայ եկեղեցու հիմնադիրներից մեկը Բարդուղիմեոս առաքյալն է հանդիսացել:

Այս պատմական հանդիպման արդյունքում երկու եկեղեցիները հանդես եկան «Միասնական հայտարարությամբ» [2, էջ 57]:

1970 թ. մայիսի 8-12-ը եղան իսկապես պատմական և բացառիկ օրեր, երբ երկու հայրապետները սբ. Պետրոսի մայր տաճարում սբ. սեղանի առջև ուխտեցին առավել ամրապնդել հռոմեական կաթոլիկ և հայ առաքելական եկեղեցիների կապերը՝ ապագայում ավելի սերտ համագործակցության ցանկությամբ: Հայոց հայրապետի Հռոմ այցելությունը տվյալ ժամանակահատվածի միջեկեղեցական հարաբերությունների համատեքստում մեծ իրադարձություն էր, հատկապես Եկեղեցիների համաշխարհային խորհրդին անդամակցելուց հետո (1962 թ. ապրիլի 26) [3, էջեր 64-76]:

Այսպիսով, հայ առաքելական եկեղեցու և հռոմեական կաթոլիկե եկեղեցու հարաբերությունները 20-րդ դարում դրվեց նոր մակարդակի վրա: Այդ գործակցությունը ժամանակաշրջանի համար բավականին կարևոր և հիմնարար ազդեցություն թողեց՝ դառնալով ամուր հիմք հետագա դեպքերի, իրադարձությունների և էկլումենիկ գործընթացների համար: Այս հանդիման կայացման մեջ իր ուրույն դերն է ունեցել նաև կարդինալ Աղաջանյանը, ով Հռոմում բոլոր կարևոր բնականներին ուղեկցում էր հայոց հայրապետին: Հետաքրքրական է, որ նաև կարդինալ Աղաջանյանի և Վազգեն Ա-ի հանդիպումը խիստ երբայրական էր և մինևույն ժամանակ շատ մտերմիկ: Նրանց այս հարազատ շփումը վկայում է նաև այն մասին, որ երկուստեք մոռացության էին տվել նախկինում ներգաղթի դիրքորոշման վերաբերյալ հնչած մեղադրանքները: Այսպիսի դիրքորոշումը հատուկ է աստվածահաճո և իսկապես ճշմարիտ հոգևորականի, ով իր վարքով պիտի օրինակ ծառայի հավատացյալների համար:

**Օգտագործված գրականության ցանկ**

1. «Էջմիածին» հանդես, ապրիլ, էջ 18:
2. Պատմական այցելություն մը, Una visita storica, Ն.Ս.Օ. Վազգեն Ա կայցելե Պողոս Չ Պապին (մայիս 8-12, 1970), Հռոմ, էջեր 9-10, 27-28, 41, 57:
3. **Պողոսյան Լ.**, Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսի հասարակական և մշակութային գործունեությունը: Ատենախոսություն, 2013. – Երևան, էջ 64-76:

Տճան/Հանձնվել է՝ 09.01.2025  
Րեցենзирована/Գրախոսվել է՝ 16.01.2025  
Քրիյա/Ընդունվել է՝ 23.01.2025